

1204. 2093.

284
3626

12004.

600 \$1

Հ

2093 284 751-44.

ՃԵԾ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԻՈՐԴՆԵՑ

ԸՆՏԱԿԱՆ ԽԵԴՐՈՅ

ՊԱՐՈՆ ՅՈՎԱՔԻՓԱՅ ԱՂԱԲԵԴԵԱՆ

370

ԳՐԵԱՑ

9574-ԹԱ

Մ. Դ. ԹԱԴԻԴԵԱՆ, Վ. Ա.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՆ ՏԵՍՈՆ ՎԵՐԱՄ
ԱԶԳԱԾՈՐ ԿՈՎՈՒԹԵԿՈՎՄ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



16 JUN 1898
ЦЕНТР. Б.
Арм.



371

ԳԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գ. Հ. ԲՈՒԼԱԿ ԸՆԿԵՐ
- 6 ՀՈՆՅ 1898
Կենտր. Բիոլո. - Խ. Վ.
Արմ. Ելաց. ՕԵ Հ.

ԳԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԻԿԻՆ

ԵՎՀԱՄԱՅԻՆ ՅԱՐԴԱԵԱՆՑ

ՆԱԽԱՐԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԸՆԴԻՄՈՒԹԵԱՆՑ

ԳԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԻԿԻՆ

ՊՍՊԴՈՒՆ Պատմութեան Հռովմայ թողումք
հրաշանալ յիւր Կուռնէլիս, կամ՝ հրաշացուցա-
նել զնա յիւր տաշուն տապարուն որդիս, այնինչ
բովանդակ իմաստութիւն ժամանակին՝ յիմարու-
թիւն էր առ Աստուած, Եւ մեք յատուկ մեղսես-
հական պարձանօք՝ Ձեօք նոր դլուխ հատանեմք
Պատմութեան Աղգիս՝ Գլխուհեաւ անկեան երկուց
Մեծահամբաւ Գերդաստանաց Աղգի մերոյ՝ ՚ի Կալ-
կաթա ։ որոց որպէս արեամբ՝ նոյն և արդեամբք
հանդիսացար ժառանգուհի առաքինութեանցն և

փառաց : Որթ ողկուզաբեր տնկեալ յԱյդի Սիւ
բելսյն՝ բարունակս ձգեցեր ի ծովէ մինչև ի ծով,
և աստուածային օրհնութեամբ նոր Սառայ եղեալ
Հայաստանի՝ ողջոյն հասարակութեանս մայրացար :

Զեօք և **Զերովք** սկսաւ Դպրութիւն Ազգիս,
կառուցան Դպրոցք, հաստատեցան Տպարանք, հը-
բատարակեցաւ Գրեանք, և պայծառացաւ Եկե-
ղեցի Աստուծոյ . տինա թէ՛ և մեծ մասն Երկրա-
կան Հայ Քրիստոնեայ հաւասացելոց ի Զէնջ սնու-
ցեալ և զարգացան ի շնորհս Աստուծոյ ։ Զեօք
նախ սկիզբն արար Գաստիարակութիւն Օրիորդաց՝
և ի Զէնջ արդ՝ Այցելուհի Կուսական Կրթարանի
Ազգիս մերոյ :

Ապաքէն եթէ զբարին դիտաւորութեան մարդ-
կան կշռել արժան իցէ համընթացութեամբ կա-
մացն Աստուծոյ, ուրեմն արձակութիւն խնդրեմք
շնորհաւորել Զեօք, Տիկի'ն ՄԱՅՐ, իբրև մաքուր
գիտաւորութեամբ Յորդորողի Ճառիս՝ միանգամայն
և Ճանապարհին Գաստիարակութեան Օրիորդաց՝
ի Սուրբն Սանեղութան, որ գոգջիք զոյգ սկսեալ՝ և
գոյգ կատարեցան Տէրամիւ :


Վասն որոյ սակաւաթերթ և դուզնաքեայ որքան
և է Ճառս , տակաւին առաջին գոլով ՚ի կրօւածա
Շառայի Ձերում , որ ՚նախ արարն և ուսոյց՝ Ձեզ
յաւէտ պատկան դատի մատուցանել ՚ի Պատարագ
Պարտեոց և Անծառանաց իւրոց


ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ


ԶԵՐ



ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ







ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՕՐԻՈՐԴԱՅ

Գրաքանչ Ա.

Յազդակ Եկ ուր «Հայաստանի Հանրապետության Օրիորդայ»

ՄԱԿՐԱՆԱԼ աստանօր 'ի գովեստ
զինչութեան և արգասեաց գաստիա-
րակութեան, կամ որ լաւ ևս՝ գպրու-
ցական կրթութեան գողտրական սե-
րին՝ կամ (Օրիորդաց Աղդի մերում՝
այնպէս է, որպէս թէ նստեալ 'ինու-
րոյ երազո կարկատէաք կամ զաւելոր-
դաց և զյայտնեաց գայաք լնդ վայ-
րապար ճարճատող: Քանզի՝ եթէ ընդ-
յետո հայել հայիցի ոք 'ի հնութիւնս
ժամանակաց՝ տեսանելով տեսանէ ոչ

Ա

միայն զնախկին աստուածպաշտութեն
 կառուցեալ սեղան 'ի Հայս հաշտել
 զիրէն 'ի նուէր, և զառաջին դարուն
 դպրոց ուսման ճարտարութեան և ար-
 ուեստից հարանց համատարած ազ-
 գաց աշխարհի, այլ և՝ որպէս հաւա-
 նեալ իսկ եմք՝ վճիտ տեսանէ նա զա-
 ռաջին ուսումնարան նահապետական
 Արց նոցա, այսինքն Օրիորդաց
 Հայաստանեայց՝ Հսկայուհեացն ա-
 ռաջնոց, որք ընդ Հսկայից մեծա-
 գործացն աջակցեալ՝ սփռեցին զար-
 հեստ և զգիտութիւն յորդիս և 'ի
 թոռունս իւրեանց, և 'ի զինեացն ընդ
 արանց միահաղոյն և եղբարց՝ յաստ-
 ուածութիւն վերադասեալ՝ արժանա-
 ցան ակնածականն երախտագիտու-
 թեան հանուրց ազգաց աշխարհի: Ո՞վ
 այն Աստղիկ, կամ Արուսեակ, կամ
 Անահիտ, Խսիս, և բիւր այլ այս-
 պիսի անուանք, եթէ ոչ ճարտար և
 հանճարեղ Հայուհեացն ակումբ, որ

իմաստութեամբ իւրեանց բարերար
ազգի մարդկան հանդիսացեալ՝ նախ
զմայրական, և ապա զաստուածա-
կանն ընկալան՝ ի մարդկանէ զպատիւ :
Այն զհանդերձին անկուած և ձեւ հը-
նարելով, ոմն զդեղոց և զարմատոց
զօրութիւնսն փորձելով և բժշկու-
թեանն նախամայր լինելով, այլ ոմն
զտնարարութեան կերպ և կանոն հաս-
տատելով, այլովքն հանդերձ :

Աչ վայրապար ինչ է դրութիւնս .
լիցի Հայաստան՝ ով որպէս և հա-
մարիլ յօժարիցի, տակաւին ոչ կա-
րէ ուրանալ թէ յերկու հազար ա-
մաց հետէ, այսինքն յիշամայ մին-
չե 'ի Պըհեղեղն, հանդիսարան և
ստնտու գոլով ամենայն մարդկան,
որք զմի և եթ լեզու խօսէին, չիցէ
հնարեալ իւր արուեստս պիտանա-
ցուս 'ի դիւրութիւն կենաց այնքան
բազմութեան : Յայսց արուեստից,
որպէս յամենայն դարս՝ նոյն և այժմ

իսկ 'ի մերում դարու , ոչ ոք իշխան մերժել զկանացին ճարտարութիւն : Եւ եթէ այսպէս՝ ուրեմն առաջին ուսումն գողտրական սերին էր՝ որ դտաւ 'ի Հայաստան, և սըիւեցաւ ընդ դստերաց իւրոց յաշխարհ ամենայն :

Օ Հնոց զանց արարեալ՝ խօնարձեսցուք (Թող) յարդի անտերունջ վիճակ մերոյ Հայրենեաց . ուր քաջտեսանէն նրբազնին բանասէրն , զի եթէ գեթ քսան ամօք 'ի խաղաղութեան կայցէ աշխարհն՝ չի՞ք արուեստոր ոչ ծաղկէ անդանօր , առաւել ևս արագ՝ քան թէ յայլուր Հնարէ : Կա , կապեան դու՝ եթէ կամիս, զերթևեկ կարավանաց յամենայն կուսէ, և արդել զվաճառ յօտար աշխարհաց . տակաւին երկիր մեր առատութեամբ զնիւթն՝ և Հանճար բնակչաց զարուեստն մեծ արարեալ՝ ոչ ինչ խմիք կարօտ մնան : Տիկնայք

մեր տնտեսք են մեր՝ ժրագլուխք
յամենային 'ի գործս իւրեանց, դիւ-
րաթեկ և դիւրառուք ամենային ուս-
մանց : Տիկնայք մեր ոստայն արկեալ
նիւթեն մեզ 'ի կայձէ՝ այսինքն 'ի
թաղեաց մինչև 'ի նրբաթել կերպա-
սին : Տիկնայք մեր են մեզ բժիշկք
ինքնուսոյցք, և հազիւ ուրեք վրի-
պին 'ի ճարտար դեղատուութեան իւ-
րեանց :

Աստեղաբաշխութեան առաջին գիւտ
լինել 'ի Հայս, և մշակել այնր ա-
ռաւելապէս 'ի տիկնաց մերոյ աշխար-
հի՝ յայտնի ցուցանեն անուանք ամ-
սոց մերոց զհետ երկոտասան որդ-
ւոցն Հայկայ, և անուանք քսանեչո-
րից ժամուց՝ զհետ սկայուհի դստե-
րաց նորա : — Զիք ազգ յաշխարհի
որ կարիցէ յառաջ բերել այսքան
հին, և այսքան հզօր ապացոյցս 'ի
հաստատութիւն գիւտիս այսորիկ :
Եւ զի՞ մի մի թուել մեզ միահազոյն

զամանայն + ասղունիք նոցա տռնեն Հը-
րաշս 'ի նկարչութեան , և Հրաշա
լիք 'ի վարագուրաց տաճարաց Տեառն
յանդիման կացուցանեն զպարծանս գե-
ղապատար կուսանաց մերոց :

Կենդանական Մագնիսուն գիտուն՝
որ այժմ գրաւէ զուշադրութիւն հա-
մօրէն Եւրոպիոյ , այն զի Կեսներ ոմն
Գերմանացի ՚ի 1778 թուականի Տեառն
ընդ աղօտ իմն Հրատարակեաց անդ ,
յատուկ է պառաւանց մերոց յանցի-
շատակ դարուց անտի , զոր և կոչեն
“Աղօթել :” Յորժամ դէպ լինի հի-
ւանդին գիմել առ նոռա , նոտուցա-
նէ Աղօթողն զնա յանդիման , առնու-
զասեղն մի կամ քորոց 'ի պտղունցն ,
կծկէ զամենայն մատունս իւր , և ստէպ
շուրջ բոլորեալ զգլխով , զծոծրակաւ ,
և զերեսօք հիւանդին՝ գրգուէ 'ի նա
և յինքն զայն ահագին յօրաշտումն
և ճօճումն մարմնոյ՝ մինչեւ յորդո-
րել զնա 'ի բուն , ապա խրէ զասեղն

կամ զքորոցն 'ի դուտակ նորա և
արձակէ 'ի բաց :

Երկրորդ՝ եթէ ոք 'ի նորութիւն
լուսաւորեալ աղղացն ակնարկիցէ ,
արդարե բարի նախանձու ջեռուցեալ
եռայ տեսանելով՝ թէ յորչափ կատա-
րելութեան հասեալ իցեն տիկնայք նո-
ցա . որ ոչ միայն ձեռակերտ արուես-
տիցն պայծառութեամք ճոխանան ,
այլ և իմացական մակացութեամք մա-
տեանս շարադրեն յօգուտ ընկերակ-
ցութեան աղգի մարդկան : «Բաղա-
քականութիւն և բարոյք խուժադուժ
և յերեկեան Աղղացն Եւրոպիոյ յայն-
ժամ եհաս 'ի ծայր արդի կատարելու-
թեան իւրոյ՝ յորժամ հասարակախլ-
նամ տեսչութիւն օրէնսդրաց նորա
սահմանեաց զհարկ դաստիարակու-
թեան գողտրական սերի նոցա :

Ապաքէն եթէ նոքա՝ որ առ մե-
րով տիեզերակալ թագաւորութեամք
և անուն աղգի ոչ ունէին՝ որով

Ճանաչէինն , սովին յայն գերակայ
 ժամանեցան 'ի կոպար քաղաքական
 կրթութեց , մեզ՝ որպէս սկզբան և նա-
 խահօր ազգաց աշխարհի , առաւել
 արժան և հարկ է կրթել զօրիորդս
 մեր յուսմունս պէսպէս և պիտանի
 գիտութեանց : Ո՞ի որպէս գոհարն
 'ի զարդ մարմնոյ՝ նոյնպէս և գի-
 տութիւնն է պերճութիւն հոգւոյ :

Գլուխ Բ. •

Յաղագս հարի Դաստիարակութեան Օքուբդաց ըստ
որում բանական :

Օրիորդք կամ լաւ ևս ասել ե-
գական սեր ազգաց՝ գողորական մասն
գոլով մարդկային կենաց, սիրունա-
գոյն անդամք ընկերակցութեան, և
'ի չարիս և 'ի բարիս անբաժան վի-
ճակակիցք՝ առաւելապէս կարօտին
ամենատեսակ վայելչական, առտնին
և քաղաքական հրահանդաց, քան
զարուս նոցա, Պատճառ, նախ՝ զի
ակար գոլով ուժով մարմնոյ և ան-
դամոց՝ պարտին զթերին բնութեան
արուեստականաւն ըստու և կատարե-
լագործել: Երկրորդ՝ զի նազելի մասն
գոլով կենաց և կենցաղավարութեանց՝
պարտին հրահանգոք կըթել զան-
ձինս իւրեանց 'ի պիտանութիւն և
'ի հաճոյականութիւն: և ամենայն
ընկերակցութեան կարգ և կանոնս
սահմանել քնքուշ բարոյիւք իւ-

բեանց : Օ ի արանց օդնական և գոր-
 ծակից ստեղծեալք՝ ոչ ինչ իւիք
 զպայման նախատես արարչութեանն
 կատարէին , եթէ զուրկ և ունայն
 մնային 'ի սխրալի հրահանդաց կեն-
 ցաղական գիտութեանց : Օ որդեակս
 ոչ մնուցանէին յերկիւղն Աստուծոյ՝
 գտուն բարւոք ոչ խնամէին , զվաս-
 տակս արանցն շռայլաբար վատնէին,
 և յայսցանէ յառաջ գային բազմա-
 տեսակ չարիք և վնասք աղգի մարդ-
 կան : Առ լոկ սոխ ու հաց . դիր 'ի
 սեղան քո , և հրաւիրեա 'ի նա , ե-
 թէ կամիս զիշխան ոք կամ զթագա-
 ւոր . եթէ կինքո , քոյր , կամ դուստր՝
 որ մատակարարէն զնոսա , քաղաքա-
 վարեալ իցէ և հաճոյական , անշուշտ
 հաւատա՛ զի ամենապարզ սեղան քո
 ձգեաց գրաւեաց առ քեղ զերախ-
 տագիտութիւն հիւրոցդ . իսկ թէ
 ընդ հակառակն՝ լոյժ 'ի քացախ զա-
 մենագին մարդարիտ , լստ ամբար-

տաւանին Աղէոպատրայ Դաժխոյին
Եգիպտոսի , կաղմեա սեղան համա-
դամ; բայց անհրահանդութեամբ գեր-
դաստանի քում , ոչ համ տաս , ոչ
հաճութիւն : Ուստի և ամենայն մե-
ծածախութիւնք յումպէտս գնան ,
և գու ծաղրալի լինիս , քան թէ
գովելի :

Տան,—բարեկարգեալ և կառավար
տան ասել կամիմք , Հոգին որ կայ՝
կինն է . և այն՝ ուսեալ և ժրագլուխն:
Արդ որպէս մարմին կարօտի Հոգւոյ
զի կեցցէ , նոյնպէս Հոգին կարօտի
գիտութեան , զի բարւոք կեցցէ :
Ուրեմն որ զըկէ զգուտերս իւր յայս-
պիսի իմն էական և 'ի գերալրական
ամբողջութենէ կենաց , կամովին մե-
ռուցանէ զնա բաղմապիսի չարաչար
մահուամբ :

Բնսկանսի : Ա ասն զի՝ որպէս
կոյլն ոչ զգոյ յանձին զուարձու-
թիւն 'ի լուսաւոր գունաւորացն գե-

զեցկութենէ, նոյնալէս և անհրահանագեանը ու զմայլի հրաշակերտութեամբ ամենազան արարածոցն Աստուծոյ . ոչ հասկանայ զինչութիւն և զպիտա նութիւն նոցա . ոչ վայելէ որպէս արժանն է զբարիս ամենառատ բնութեան՝ իբրև զբարի . ուստի ինքնին աշխարհի մեռեալ՝ և աշխարհ մեռեալ երեխ նմա :

Բարօթականս : Ա ասն զի՞ անհրահանգ և անկիրթ մտաց լստ ինքեան չէ այնքան կարողութիւն , որով զտել և լնտրել կարիցէ լնդ մոլար և ձշմարիտ : Ուստի և անգիտութեամբ կամ փոփոխ 'ի կիր արկանէ զառաքինութիւն լնդ մոլութեան՝ առանց խտրանաց , և կամ լնդաբոյս հակամիտութեամբ բնութեանն դէպ 'ի չարն կոյս՝ յաւէտ վատթարագունին լնդելանայ՝ քան թէ յաւին և ազնուագունին : Ոչ խորշի 'ի գարշելի և 'ի Գարգոն դիմաց մոլութեան , ոչ

փարի փափադանօք զաստուածաբարն
գարշապարօք սիրալի առաքինու-
թեանն , այլ յերկոսին հետս միշտ
կաղ ոչ ճանաչէ , եթէ Տէր իցէ իւր
Աստուած՝ թէ Շանձիկն Ակկա-
րոնի :

Աստուածաբանականս : Ա ան
դի՝ անհրահանգ և անկիրթ հոգի ոչ
զգիրս քննել կարէ , յորոց կեանս
ընդունեցի , և ոչ զինչութիւն և զե-
զանակ աղօթիցն . ուստի և ոչ օրինա-
ւոր ոգւով աղօթել կարէ : Ու թէ
որպէս արժանն է՞ դիտէաք զյարդ
աղօթիցն : Ու արդիկ 'ի մարդկանէ
ինչ առաջելն հաղար դիւտոս որոնեն ,
հազարիցս յստակեն զգտեալն , զորս
և իբրև զդասս սերտեն , և այնպէս
յառաջանան երկիւզիւ և պատկա-
ռանիօք . ապս որքան ևս առաւել
արժան իցէ այսպիսի վութոյ և եռան-
գեան՝ յորժամ հանդերձիցի ոք լնդ
Աստուածոյ խօսել , թագաւորին թա-

գաւորաց , և Տեառն տերանց : Հայ-
 ոց Ազգի պատուելի՛ Օշնողք , զա-
 մենեսին աղաչեմք սիրովն Բըրխտո-
 սի միտ դնել այսր խոնարհ առաջար-
 կութեանս ; Եթէ ուսումն և գաս-
 տիարակութիւն մատաղորեար Պատե-
 րաց ձերոց աւելորդ և անպիտան
 համարիցի առ ՚ի նպաստ աշխարհական
 կենցաղավարութեան և առտնին կա-
 ռայլարութեան ձերոյ , տակաւին ե-
 ռապատիկ հարկաւ պահանջի առ ՚ի
 նպաստ աղօթից և ընդ Աստուծոյ
 մաղթանաց և պաղատանաց ձերոց :
 Տակաւին քառապատիկ հարկաւ պա-
 հանջի յամբողջութիւն Եկեղեցւոյ
 ձերոյ սրբոյ , տակաւին բիւրապատիկ
 հարկաւ պահանջի ՚ի փրկութիւնն ան-
 մահ հոգւոց ձերոց և հոգւոց գողտ-
 րական զաւակաց ձերոց : Բնութիւնն
 ստիպէ զՃնողական գթութիւնս ձեր
 նախախնամ հոգողութեամբ ջանալ և
 բարւոքել զապագայ երջանկութիւն

ղաւակաց ձերոց , և զօր երջանկու
 թիւն կարիցին տալ մահացուք , ե-
 թէ անհրահանգ պահելով զզաւա-
 կունս իւրեանց 'ի գիտութենէ Առ-ըբ
 Գրոց՝ զրկիցեն զնոսա 'ի փառա-
 ւոր աստուածախօսութեանց յաստի
 կեանս , և յԱստուծոյ միանգա-
 մայն 'ի հանգերձեալսն : Ապաքէն
 արիք ծնողք Ազգի մերում , զժամա-
 նակն մինչ ցարդ անփութութեամբ
 կորուսեալ 'ի վսաս մեծ համարելով
 անձանց և քաղցրիկ Գերմականւոյդ , +
 բուռն հարէք զդրօշակէ մօրն լուսոյ՝
 գիտութեան . և ահա աչօք ձերովք
 իսկ տեսանէք զպսակ վաստակոց ձե-
 րոց : Տնկեցէք գպրոցս Օրիորդաց
 'ի տեղիս տեղիս , և ահա ծաղկես-
 ցեն ձեզ նոքին դստերս գիտունս ,
 առաքինիս և աստուածապաշտս : Ե-
 թէ ոչ ինչ այլ օգուտ արասցեն նո-
 ցա գպրոցք գիտութեանց , տակա-
 լին Հրաժարեցուցանեն զնոսա 'ի գա-

տարկութեանց և 'ի ծուլութեանց ,
 կրթեն զնոսա յիմաստս դրոց , մաք-
 րեն դհանճար նոցա 'ի գիւտս արուես-
 տից , կանայս ժրագլուխու պսակս առ-
 նեն զնոսա արանց իւրեանց , և ահա
 այսոքիկ միայն : այսոքիկ միայն ասեմք,
 վճարեն ձեզ զամենայն դժախս ձեր ,
 քանզի դատարկուի է մոյր ամենայն չա-
 րեաց : Երանի թէ ականջք լսելոյ
 իցեն քան թէ ունչք քամահելոյ :



Յանակ հարի Շահումյանի Օւեռտա շահ
ուսում քը իսպանէաւ :

Եթէ ակն կառուցեալ հոյիցի ոք
միոյն յարտաքին շուք կերպարանաց
Օրիորդաց մերոց՝ յոտից մինչ 'ի
գլուխ , 'ի գեղապատար յայն արա-
բած ձարտարութեանն Աստուծոյ , 'ի
Հրաշալին զօրութիւն ձգողութեանց
Անահտական դիդականց , անբաւ ըզ-
մայլանօք հիացեալ 'ի միտս իւր ցան-
կոյ նոցա զամենայն որ ինչ սիրուն ,
որ ինչ վայելուչ , և որ ինչ երանա-
բարն իցէ վիճակի նոցա . Օ դոյն և մեք
ցանկամք , քաղաքավարեալք ցանկան ,
և խուժն վայրագ ցանկայ , Խոկ դու
ապա ծնող . զինչ խորհիցիս 'ի միտս
քո՝ ասա . ոչ ցանկանալով ցանկանայ-
ցես գողորտական և աղնուուհի զաւա-
կի քում զայն ամենայն , որք առնել
կարասցեն զնա բովանդակուէն Հրեշ-
տակ 'ի մարմնի : Եթէ արդարե ցան-

6004
16069

թհ. 2093

կանոյցես, չիք քեզ այլ միջոց՝ քան
զդպրոցս :

Եթէ արտաքին կերպարանօք մարմ-
նոյ, որքան և սիրուն իցէ՝ կա-
րօտի տակաւին գիտութեան յուղ-
ղութիւն վարուց և գնացից իւրոց
'ի կատարելութիւն հոգւոյն և հան-
ձարոյ, և յարմարութիւն անձին առ-
ամենայն բարեկարգ ընկերակցութիւն
մարդկան, ապա որքան առաւել և ս
եթէ առնուցուս զնա իբրև զքեզ 'ի
հոգի բանական, արարեալ յատուկ
'ի կերպարանս քաղցրագոյն կատա-
րելութեանց Արարչի իւրոյ և քո, և
առաւել 'ի դալար և 'ի գողտրական
նիւթոց քան զքեզ . զի զու տրարար
'ի հողոյ, իսկ նա 'ի կողից քոց. ոչ
միայն վեճակակից և օգնական քեզ յա-
մենայն ել և էջո պատահարաց աշխար-
հիս այսորիկ՝ այլև ժառանգակից և
հաղորդ արքայութե կուսածին Ուա-
գաւորին :

Վ ասն անձնական օգտի ուսեալ
Օրբորդի՝ փոքր 'ի շատէ խօսեցաք
'ի նախընթացն . այժմ արձակութի
Հայցեմք խօսել փոքր 'ի շատէ ընդհա-
նուր օգտից վերայ՝ որք անշուշտ զհետ
գան Քրիստոնէական հրահանգաց և
կրթութեանց :

Եթէ 'ի մէջ ընդհանուր աշխարհի,
յանցեալն , 'ի ներկայս և յապառ-
նիս միանդամոյն Հայեացուք միմիայն
Քրիստոնէական հաւատն է ծաղ-
կեցուցիչ և տարածող քաղաքական
կենաց և առտնին երջանկութեանց՝ ի
ձեռն ծայրագոյն և աստուածային բա-
րոյականութեանցն՝ զոր ոչոք ուրանալ
կարէ , Ուրեմն կոյս փոքրիկ՝ որ ընդ-
հասակին զարգանայցէ և յուսումն
աստուածային վարդապետութեանս
այսորիկ՝ լինի հարսն աստուածասէր,
կին այրասէր , մայր որդեսէր , տի-
կին տնարար , օրինակ քաղաքավա-
րութեան, զարդ ընկերութեան, տնտես

Հաւասարատես, գլթութիւն անկոպար,
դժխոյ հասարակախնամ, հաւատացել
բարեպաշտօն, պարկեշտ դայերակ դըս-
տերաց, բարեպաշտ դաստիարակ ման-
կանց, ամրութիւն եկեղեցւոյ, պար-
ծանք աշխարհի :

Վ ասն այսպիսի իմաստուն կանանց
ասէր Առղոմնն շինել զտունս իւրեանց և
կանգնել սիւնս եօթն ՚ի նոսա, Վ ասն
այսպիսի իմաստուն և ժրագլուխ կա-
նանց քարոզէրնալինել՝ի պսակս արանց
իւրեանց, Բայց Հայաստան առաւել
ևս չնաշխարհիկ կանայս կարաց և կա-
րէյառաջ բերել. որ եղեալեն և լինին
գիտուք և իմաստութեամբ իւրեանց
սիւն և հաստատութիւն սրբոյ Եկե-
ղեցւոյ մերոյ :

Յաղկերտ Պարսից թագաւոր՝ զիւր
անգգայ արեգակն առեալ՝ մարտնչէր
ընդ երկրպագուս Արեգականն Արդա-
րութեան. և զիւրոյ շիջանիւթ կրա-
կին մոխիր ՚ի գլուխս ցանել իշխէր

մեր խաչակիր Կյահատակաց : Վարդանն իւրովք սլսակաւորօքն ընդդէմ զինէր կամաց նորա . բայց որով զինու և զօրութեամբ , այս ինչ աշխարհն բովանդակ երկպառակեալ էր , և Կայսրն կանացի՝ վեհերոտեալ զանձին և եթ խնդրէր զհեշտութիւն զառօրեաց : Ասա՞ . որով ։ — Մայրենի և բարեպաշտ ուսմամբ իւրով : « Քանզի մայր նորա գուսար Մեծին Սահակայ Պարթեական Հայրապետի մերոյ՝ ուսեալ՝ ի հմտութիւնս գրոց սըրբոց ՚ի հօրէն իւրմէ , ընդ կաթին հաւասար գողջիր մատակարարեալ զայն և որդւոց իւրոց , Վարդանայ Համազասպայ և Հմայեկանն , քաջացոյց բարեպաշտութեամբ և արիութեամբ սխրալին առաքինուեց : Կոյնպէս առնէին յայնմերջանիկ դարու և ամենայն Տիրուհիք Կյահարարուեց Հայոց աշխարհին : Բայց անկան Վարդան ՚ի սուրբ

ողատերազմին վասն հաւատոցն որ 'ի
Քրիստոս, և կարծէր ոք յայնժամ
թէ աշխարհն ոտնկոլս եղեալ կործա-
նէր, և Քրիստոնէութիւննյարեապաշ-
տութիւն ընկղմեալ անհետանայր յաշ-
խարհէն : Այդպէս և լինէր իսկ. ե-
թէ չէր հոգ տարեալ սրբուհեաց,
այո՛ և առաքելուհեաց իսկ աշխար-
հիս Հայոց՝ կրթել և դաստիարակել
զորդիս իւրեանց զուստերս և զոր-
տերսն միանգամայն 'ի Հրահանդսներ-
քին և արտաքին դիտութեանց :

Մեծ մասն գրեթէ և բոլոր ուխ-
տապահ նախարարք մեր կապեալք
էին 'ի գրան արքային Պարսից. ու-
րեմն որ այլ խոչ արդել լինէր Յազ-
կերտի և յաջորդաց նորա զկամս ամ-
բարշտութեանցն կատարել : Պատաս-
խանեմք, ընդհանուր ՈՒՍՈՒՄՆ ա-
րանց և կանանց ժամանեակին, Պատ-
մերս Պազար Փարապեցի : “Կանայք
նահատակելոցն արանց, և կանայք

կտակելոց 'ի դրանն՝ թէպէտե 'ի նե-
 ղութեան էին, սակայն ուսուցեալ,
 և ոչ իբրև զանփոյթ և զանպիտան
 կանայս, այլ իբրև դքաջայրս՝ զառա-
 ջիկայ զօգտաբեր շքեղաբար հրա-
 հանգս մանկանցն հոգացեալ լնուին։
 Եւ մանաւանդ (Զուիկ) կին նահա-
 տակին Հմայեկայ եղբօրսըբոյն Վար-
 դանայ, որ եղե կին անուանի և ա-
 ռաւելեալ ամենայն լաւ և մտաւոր
 մասամբք յամենայն կանայս 'ի Հայ-
 աստան աշխարհիս, որ մնոյց և խրա-
 տեաց զորդիսն իւր յաշխարհին Վար-
 դաց ՚ի տան Աշուշայի Վարաց բգեշխի.
 վասն զի դքոյրն Զուկայ ունէր բը-
 դեշխն Վարաց Աշուշայ։” Եթէ յօ-
 ժարութիւն իցէ ումեք և զկատա-
 րած այսր կանացի, բայց և հոգա-
 ծու դաստիարակութեանն տեսանել,
 աւանիկ նոյն Հեղինակ լիով մատա-
 կարարէ։ “Եւ մնուցեալ անդ ման-
 կունքն և ուսեալ՝ յառաջադէմք է-

ին յամենայնի և Հռչակաւորք . որք
 դեռ ևս 'ի տիս մանկութեան՝ ամե-
 նայն տեսանող մտաց երեկին յաջո-
 զակք և զարմանալիք : ” Այսպէս և
 քեզ ըղճամբք ծնող Հայկազուն, տե-
 սանել զուստերս և զգստերսդ՝ ամենայն
 ուսմամբ յաջողակս և զարմանալիս :
Տես ահա այս է վախճան Դաստի-
 արակութեան (**Օ**րիորդաց . եթէ կա-
 նայք կապելոց 'ի դրանն, և եթէ
Չուիկ կին Հմայեկայ չէին աշտ-
 կերտեալ ուսման 'ի տիս մանկութե-
 իւրեանց՝ ոչ կարէին հասուցանել զոր-
 գեակս իւրեանց յազատութիւն Ե-
 կեղեցւոյ և աշխարհիս մերոյ : Մայ-
 րենի ուսումն կարէ արդարե փոխել
 զամենայն **Պ**ատանի 'ի Ա ահան Մա-
 միկոնեան : Եւ զամենայն (**Օ**րիորդ՝ ՚ի
Մահակաղուխտ . սքանչելի (**Օ**րիորդ
 Հայկազունի՝ Քոյր Մտեփաննոսի Եւ-
 նեաց Եսլիսկոպոսի՝ զորմէ այսպէս
 գրէ Մտեփաննոս (**Օ**րպելեան , “ Ա

յոյժ Հմաւտ էր ասէ երաժշտական արուեստին, որ և 'ի ներքոյ վարագուրի նստեալ՝ ուսուցանէր զբաղումն և արար (այսինքն շարադրեաց) կը ցորդս և մեղեղիս քաղցրեղանակո, յորոց մի Սբուհի Մաքանձ, որ իւրով անուամբն է յօրինեալ.” այսինքն որոյ դլխատառքն յօդէին զանունդ Աահակադուխտ :

Օ ինչ յաւելից գրել և զ Մարիամայ գստեր Աշոտայ Առաջնոյ Արքայի մերոյ . և զՇուշանայ տիկնոջէն Պ.րիգորի Պալհաւունոյ, և զայլոց հնագունից՝ մայր և դայեակ անուանելոց կրթութեան և հրահանդաց :

Տեսեր զընդհանուր օգուտ դաստիարակութեանն Օրիորդաց, թէ որպէս սիւն հաստատուե եկաց Եկեղեցւոյ յայնպիսի ալէկոծեալ և 'ի սասանեալ դարու, ապա ուրեմն հետեւեան օրինակին՝ թէ սէր ունիս Եկեղեց-

ւոյ + որպէս զի և դստերք քռ մայ-
րացեալ բարեսնունդ զաւակաց՝ կա-
րասցեն ընծայել Ազգին զԱ արդան
և զԱ ահան ոք + կամ գոնէ զԱ ա-
հակաղուխտ երաժիշտ, և զՇ ուշան
հրաշարան :

Գ.Հ.Տ. Դ.

Յազագոյն Դաստիարակութեան Օբէնբաշ ըստ ոբուժ
պատմութեան և Տարբեան :

Առաջաձն , այսինքն մի անձն՝ ոչ
կացուցանէ զմի տուն , այլ ըստ հա-
սարակ առման աշխարհագրական կա-
նովնի՝ պահանջէ գոնեայ ոգիս վեց
'ի կացուցանել զտուն . առաջ սկեսայը
մի և սկեսուր , յայր և 'ի կին , յոր-
դիս , 'ի ծառայս , և յաղախնեայս :
Արդ 'ի թուոյ անձանցս այսոցիկ զա-
նազան պաշտամունք և արժանիք յա-
ռաջ բղխին , որոց ամենեցուն ու-
սեալ և հրահանգեալ հարսնացուն
գիտէ ըստ տեղւոյն սպաս հարկանել ,
պատուել , սիրել , սնուցանել , հրա-
մայել և խնամել միանգամայն . և
այն՝ այնպիսի իմն անուշակ և բարւոք
եղանակաւ , մինչ երեեսցի գործն՝ ոչ
'ի հարկէ՝ այլ 'ի հաճոյից յառաջ
շարժեալ : — Այս տիրապէս հաճոյ-
ական եղանակ հարսնութեանն մէծա-

պէս կարօտի տեղեկութեան ընդհանուր պատմութեանց , բնաւորութե և բարոյից ազգի մարդկան տռհասարակ , և որ մեծ է՝ ստէպ ընթերցուածոց Առուրբ Գրոց :

Երկրորդ մասն գրութեանս մերոյ է տնտեսութիւն . որ շտտ հեշտ բան թուի յորժամ 'ի լի տանէ 'ի լի տուն անկանիցի դուստր քոյ . բայց ոչ է այնպէս : Քանզի շատ լի տունք դատարկացան անխոհեմ կառավարութեամբ տնտեսացն : Ապաքէն հարկաւոր է նմա նախ առաջին՝ տնտեսական գիտութեան հմուտ լինել , զհրմտացեալն իրօք 'ի գործ գնել , ոչ ճշդել 'ի սա , և ոչ շռայլել 'ի նա , սյլ զմիջին ճանապարհ ունել զՊափաւորութեան : Պարտ է նմա և թուաբանականին հմտանալ գիտութեան , որով զեկամուտ ընդ ճախուցն կշռելով՝ գէտակն ունիցի յաւէտ գէպ 'ի խնայութիւն անդը , և յառօրէա-

կան թոշակեն զտեսցէ գոնեկ չնչինս ինչ
 եւ դուզնաքեայս ընդդէմ աւուր նե-
 ղութեան : Տնտես և տնարար Տիկ-
 նաց պարտ և արժան է նաև գիտու-
 թիւն չափուց և կշռոց . որպէս և
 արժէից և զինչութեան տոհմականաց,
 իրաց պիտանեաց և մսեղինաց , որ-
 պէս զի ծառայից տեղի չտայցէ խա-
 բել զինքն : (Եւ եթէ սյսպէս՝ բար-
 ւոք ևս առնեն ծնողք եթէ զծախս
 սեղանոյ որպէս և զգեստուցն գնե-
 լեաց՝ կամ յանձն արասցեն (Օրիոր-
 դաց , և կամ զտումար հաշուոյն տայ-
 ցեն նոցա՝ զի գրեսցեն և վարժես-
 ցին) Առաւել քան զամենայն պարտ
 է նոցա ունիլ զչափաւորութիւն 'ի
 զգեստս և 'ի զարդս իւրեանց . քան-
 զի աւելորդութիւն զարդուց անգամ
 ծաղրալի կացուցանէ զնոսա յաչս ա-
 մենայն հրահանգեալ ընկերակցաց :
 Եւ այս թէպէտե յանկարելեաց սա-
 կի համարի կարծել 'ի նոցանէ , բայց

գեռ ևս շար կայ : Գիտութիւն—
ճշմարիտ գիտութիւնն ասեմք , յոր-
ժամ 'ի խոր արմատասցի 'ի միաս
նոցա՝ մինչ տալ զստոյդ ճաշակ քաղց-
րութեան 'ի քիմս նոցին , յայնժամ
ինքեանք իսկ արհամարհեն զպսպը-
զուն գիրդս երկրի . և զգիտութիւն
համարին իւրեանց զարդ ամենագին ,
զոր ոչ գողն գողանայ , և ոչ ցեցն ա-
պականէ :

**Յանտէրունջ վիճակի Ազգիս մ-
լոյ դուն ուրեք գերդաստան ինչ
մի օրինակ ընթանայ . այլ է՝ զի յա-
ջող , և է՝ զի ճախող ելեէջք պա-
տահարաց փոփոխեն զբավանդակ մա-
կերեցյթ նորա յայլ իմն տարագ կա-
ցութեան : Բայց գիտութիւնն , որ
առաջնորդ լինի տնարար տիկնաց կա-
ռավարել զմիլիոն 'ի յաջողութեան,
նոյն և չափաւորէ զեղանակ կացու-
թեան նորա 'ի ճախորդութեան՝ գուզ-
նաքէիւքն շատանալ . և փոխանակ**

Հարստութեան՝ ինքն կայ առն իւրում
՚ի միսիթարուի, 'ի զուարձութիւն և ՚ի
կատարելութիւն միանգամայն։ Տգէտ
մնանկն արհամարհանաց արժանի լի-
նի, բայց գիտուն և կատարեալ որ-
նանկն՝ ափսոսանաց աշխարհի։

Վատիցուք այսուհետե տեսանել
և զպաշտօն տնարարին 'ի միւս գիմաց
նորա։ Այժմ գիցուք թէ նա մայր է,
մանկունք շուրջ թոթովեն զնովաւ, դու
ասի՞ թէ Հայերէն աստուածախօս բար-
բառով։ Քանիզի ազգասէր ծնողանին
ոչ երբէք թոյլ ետուն այլազգի ա-
ղախնեաց և ծառայից հեղուլ ՚ի մա-
տադ միտսնոցազնուժադուժ բարբառ
և բարս իւրեանց։ Եւ զինը յայսմիկ
համարիս վայելուչ զստեր քում՝ ծլ-
նող Հայկազուն, 'ի մասին դաստիա-
րակութեան թոռին կամ թոռանցդ։
Տակաւին Դալրոցի հասուն չեն հասա-
կանին, բայց կարեն յայտնել բարբա-
ռով իւրեանց զամենայն զպէտս իւրեանց,

ուսանին զհազար անուանս բարեաց :
 չուսանիցին ապա և զանուն Գրերա-
 գոյն Բարերարին՝ որ արար զնոսա ,
 Զգիտիցին ապա թէ զին՝ չ տրիտուր
 ալիտին փոխարինել վասն առօրէ ական
 շնորհացն . չուսանիցին ապա սիրել զնա ,
 և զընկերս իւրեանց վասննորա : Եւ այս
 ամենայն իւ լինի , եթէ մայր ինքնին
 տգէտ իցէ 'ի գրոց ներքնոց ասեմք,
 և արտաքնոց : Այսոյն զանցառու-
 թիւն ծնողաց 'ի դաստիարակութի
 տղայոց յառաջին տիս մատաղութեան
 'նոցա՝ պարտաւոր կոցուցանէ զնոսա
 սլատասխանաւու լինել առ յապայւ
 պնացից 'նոցա՝ առաջի ահեղ դատաստա-
 նին Աստուծոյ . մւր մնայ՝ ապա եթէ
 ոմանք՝ 'ի դառն տգիտութենէ շար-
 ժեալք մանաւանդ թէ և 'ի դառնաւ-
 գոյն ամբարշտութենէ՝ փոխանակ սեր-
 մանելյ յառուչ և 'ի յարգաւանդ
 մարմանգս դալար մտաց մատաղորեար
 մանկուոյն զառողջարար սերմանս ազ-

Նիւ սննդեան և աստուածային ամեւ-
 նաքաղցը և անուշակ վարդապետու-
 թեանց՝ ուսուցանիցեն նոցա կատակս
 անտեղիս և հայհոյութիւնս անլուրս
 և աններելիս . զմտաւ ածեալ՝ թէ
 տղայն դեռ փոքրիկ է , և ոչ ներ-
 գործեն ինչ 'ի նոսա ուսմունքն չա-
 րեաց : Աւստի և փոխանակ ողբալոյ
 և կարձելոյ զայնպիսխ՝ առաւել քան
 զառաւելին յորդորեն զնա , և ինքեանք
 անզգայօրէն նստեալ ծիծաղին , Ավ
 զուարձութիւն , որոյ վախճանն է կո-
 րուստ անհնարին զաւակաց և ծնո-
 ղաց միանդամայն : Այսօրինակ չար-
 ուսոյց ծնողաց էին և չար զաւակունք
 Բաթուղվայ որք տեսեալ զիշիսէէ
 անցանել ընդ այն՝ աղաղակեցին զհետ
 նորա և ասացին “Ել կնտակ , ել կլի-
 տակ : ” Առւրբ Գիրք կոչեն զնոսա
 մանկտի մանրիկ , և ինչ մեղք սոցա
 եթէ աղաղակէին առ Արդարէն
 Աստուծոյ՝ թէ ել կնտակ , ել կլի-

առակ : — Բայց և սյնպէս՝ որոշակի ըստորագրեն Առւրբ Գիրք զահագին Հետեանսն . Դարձաւ ասէ մարգարէն ՚ի թիկունս , ետես զնոսա . (՚ի հարկէ ետես . զի մանրիկ մանկտի էին . սակայն անէծ զնոսա յանուն Տեառն և ասէ , “Որդիք յանցանաց և դատարկութեան : Եւ ելին երկու արջք յանապատէ , և պատառեցին ՚ի նոցանէք քառասուն և երկուս մանկունս : ” Տես զի մանրութիւն մանկտւոյն , կամ փոքրկութիւն հասակի նոցա ոչ ինչ ազդել կարաց լնդդէմ արդարահաս պատժի պատուհասին Աստուծոյ . և դեռ դու ծնող , համարձակիցիս լնդդէմ պատուիրանացն Աստուծոյ , լնդդէմ օրինաց Եկեղեցւոյ , և լնդդէմ կարգաց բարի սննդեան ամենայն ընկերութեան՝ սերմանել չարիս ՚ի մատադ միտս նոցա . և ակնունել բարի Հնձոց : (՚ն անդր ՚ի բաց տար այդ անոտի կարծիս քոյ , ոչ ոք երբէք քա-

զեաց 'ի տատասկէ՛ թուզ, կամ 'ի
փշոց՝ խաղող :

Մի 'ի մեծագոյն յանցանաց ան-
փոյթ ծնողաց այն է, զի առ ժամկ-
ական անդորրութիւն անձանց սկսա-
նին անուամբք սոսկալեօք և աներե-
ւոյթ էակօք և խրտուիլօք ահացու-
ցանել զմատաղ զաւակունս իւրեանց.
ասելով՝ Գրողն տանի, դեն տանի, և
որ այսպիսի խառնութնդոր էակքն-
իցեն : Որովք ոչ միայն թէ շատ
անդամ յանկարծամահ առնեն զնոսա-
այլ նա և միշտ երկչոտ, վեհերոտ,
զախիռուտ և անպիտան գրեթէ ատե-
նի և ընկերակցութեան մարդ կան :

Չեն կամք մեզ մի մի 'ի թիւ ար-
կանել զտգեղութիւն այսր սովորուե-
և զչարաչար և զաղէտալի հետեանս
նոցա . շատ է ասել, թէ դուն ուրեք
օրինաւոր հօր կամ մօր անուն ժառան-
գեաց, որ անհրահանգ և անկիրթ ե-
ղե 'ի տիս տղայութեանն իւրոյ :

Յետ Աստուծոյ ծնողք ենպատճառ
 զաւակաց իւրեանց . և որպէս Աստ-
 ուած 'ի վերուստ ցօղէ 'ի նոսա ըլ
 շնորհս առատ ողորմութեան և խնա-
 մոցն . նոյն և ծնողք պարտին յամ-
 նայնի գուն գործել և ընդ կաթին
 արբուցանել նոցա զաստուածսիրու-
 թին , զբարեպաշտութիւն և զաղգա-
 սիրութիւն՝ ամենոյն քաղցրութ և խնա-
 մով : Միանգամայն ասել , եթէ Օ-
 րիորդք ուսեալք ոչ մայրասցին հան-
 գերձեալ անհատից Ազգի մերոյ . ոչ
 հարստութիւն Շենաց , և ոչ իսկ ար-
 ուեստք Եւրոպայ բաւական լինին 'ի
 փոխել զբնաւորութիւն մերոցն 'ի վատ-
 թարէ առ լաւն կոյս : Այնքան ան-
 ջեսջ և խոր տպաւորին յունակութեան
 մանկանց մայրենի ուսումն և Պատի-
 արակութիւն 'ի տղայական տիս նոցա,
 մինչև զարտասանուի տառից անդամ
 չկարողանալ յետոյ կանոնաւոր կրթու-
 թեամբք փոփոխել յուղիղն կոյս :

Պատահեալ երբեմն ՚ի կոստանդնուպ
 ալօլսի Հարանց ոմանց Մխիթարեանց,
 զի խօսէին ընդ միմնանս՝ մատուցեալ
 առ մի ոնն ծերագոյն ՚ի միջի նոցա՝
 հարցի “Եթէ Հոյաստանցի իցես,
 Հայրէ” Պատասխանեաց՝ “Այս իսկ
 Հոյր Գևորգ Ա արդապետ Հօրմիւս
 զեան զարմանալով եհարց ցիս, “թէ
 որպէս ծանեար զնա :” Պատասխանեա-
 ցի՝ յարտասանելոյ նորա զտառսդ Ճ,
 Ճ, և Ճ : Կրինեաց, “ապա մեք որպէս
 արտասանեմք : Ասացի “դուք յայլ
 իմն ձայն հնչելով, որպէս սովորու-
 թիւն է տեղւոյս :”—“Այդ յառաջ
 գայ, ասաց, ՚ի մայրենի դաստիու-
 րակութեանց անտի մերոց, զի միան-
 գամ այդպէս ուսեալ, ոչ կարեմք
 առ յապայ փոփոխել զնոյն : Աստա-
 նօր Հ Գևորգ Ա արդապետ Մեք
 ասելովն՝ և զգամարձակ միւս գիտ-
 նականաց՝ որ անդ, ՚ի մէջ փակէր :
 Աբդ՝ եթէ այնպիսի երեելի և հոյա-

կապ Որեար Աղգիս , որոց անդռւլ
 աշխատանաց պարտապան է գրադի-
 տութիւն Աղգիս , չկարիցեն փոփո-
 խել զուսեալն ընդ մայրենի դաս-
 տիարակութեամբ : դիւրին ի՞մն իցէ
 այլոց փոփոխել զբարին 'ի չար կամ
 զչարն 'ի բարի : զորս ուսանն 'ի ման-
 կութեան ընդ մայրենի դաստիարա-
 կութեամբ : Քաւ լիցի , մտեալն
 ընդ կաթին՝ ելանէ ընդ կենաց : Հա-
 պան ջանասցուք Աղգ ընտիր , մինչ
 դեռ ժամանակ 'ի ձեռս կայ՝ դուն
 գործել , և դպրոցական հրահանգուք
 կըթել զհանդերձեալ ծնողանի Աղ-
 գիս մերոյ , որպէս զի՝ կարասցուք ա-
 պահովել զմիտս յարհաւրաց անտի
 տգիտութեանն , և ամենայն չար հե-
 տեանաց նորա :

Գլուխ Ե .

Յաղագո Դաստիարակութեան ՕՇԽԱՇԱ ՋԵՐԻ ըմբ
ոքում Հայ :

Թաերեւս ՚ի վերայ բաժանմանց մերոց
բազումք զծաղու գայցեն ասելով՝ թէ
ուսումն և հրահանգ ո՞ր քաղաքա-
վարեալ աղդի (Օրիորդաց չէ հար-
կաւոր, զի դուք իբրև սեպհական յատ-
կութիւն միայն աղդիս (Օրիորդաց
համարելով՝ գլուխ կարգէք՝ թէ պէտք
են դաստիարակութեան նոցա՝ լստ
որում Հայք են :

Պատասխանեմք, ամենեցուն է հար-
կաւոր (Օրիորդաց դաստիարակութիւն,
բայց ոչ այնքան՝ որքան մնուշակ Հայ-
ուհեաց մերոց : Եւ ջանամք լստ կարե-
ւորին ձեռնարկութեանս՝ ապացուցու-
թեամբ հաստատել զայս մեր նորածե-
գրոց գլխակարգութիւն :

‘Եախ՝ դիրք երկրի մերոյ պահանջէ
զայս : — ‘Երախտ աստուածատունկ
Հայաստան, թէպէտե օրհնութեամբ

Ամենակալին և արտաքուսա ձեացու-
 ցանէ մեզ զդբախտին փափկութեան
 Եղեմայ զվայելչութիւն , ամենապա-
 տարուն պտղովք և բերօքն առհասա-
 բակ՝ սակայն պատեալ գոլով շուրջա-
 նակի 'ի վայրագասուն և յանագո-
 րոյն ազգաց արիւնակերաց՝ 'ի սկզբանց
 յաւիտենից Հետէ՝ թշնամնաց խաղա-
 ղութեան , ամենահնար հանճարոյ և
 կենցաղական գիտութեան բնակչաց
 պէտո ունի առ 'ի պաշտպանութիւն ա-
 պահովութեան իւրոյ՝ յերեսաց Հանա-
 պազորդեան հրոսակութեանց նոցա ,
 Եւ յայսմ , որպէս և յայլ ամենսայն
 մասին , կանայք խմաստունք պիտին
 յօդնութիւն և 'ի խրախոյս կորովի
 բնակչաց արանցն իւրեանց 'ի վանել
 և վտարել զիոսա : Ըուրջ պատէ
 զ Բետիղուա գոռոզացեալն Հողեփեռ-
 նէս , և արք Հրէաստանեայք ահա-
 հարք և վեհերոտք՝ գրօք փակելովք
 ծակամուտ 'ի տունս սասանեալք՝

անարի խորհրդով զքաղաքն յանձնել խորհեին : Եւ ով էր , որ վառեալ հայրենասիրութեամբ զթշնամի Ամենակալին սատակեաց , և աշխարհի հայրենեաց եղե ազատիչ . եթէ ոչ բարեպաշտօն և իմաստուն այրին Մանասէի դուստրն Մերարեսյ :

Ոչ զարմանամք , եթէ ոմանք ընդհենգն եկեալ կատակ հանցեն և ասիցեն , ուրեմն պարտ է զինուորել ձեզ զդստերս Հայկազնոց յապահովութիւն հայրենեաց ձերոց , և արանց կեամարդի նստել 'ի տան :

Պատասխանեմք , թէ ողորմութեամբ Տեամն զինուորելիք բազումք են Արդդի մերում : Օրիորդաց մերոց չպիտին արտաքին զէնք , այլ ներքին ոգւոց արիութիւն , որով կարող լինիցին ծնանիլ , մնուցանել և հասուցանել արս քաջս 'ի պաշտպանութիւն հայրենեաց , որով կարասցեն 'ի խռովութիւնս պատերազմաց՝ անխռով

և անվլրդով զտունս կառավարել, ա-
րանց և աղջականաց իւրեանց առտը-
նին կարեւորօքն նպաստ հասուցանել,
պահարանաց և պաշարաց նախատես
և զգոյշ լինել, և որ մեծն է հան-
դարտ և լուրջ կալ 'ի տան և աղօ-
թել առ Աստուած վասն յաջողու-
թեան պատերազմին, քան թէ շփո-
թել և աղմկել զոգիս քաջոց անտե-
ղի աղաղակօքն իւրեանց : Եւ ահա
այս ամենայն պէտս ունի հրահանդաց
և կրթութեանցն՝ որոյ միմիայն միջոց
է աղգային և հրապարակականն դալրոց:
Առանին դաստիարակութիւնք թէ-
պէտև բարիք իցեն, բոյց այնքան՝ որ-
քան 'ի դատարկութենէ զոք 'ի զբա-
ղանս և 'ի գործունէ ութիւն յորդո-
րիցեն, և ոչ աւելի : —

Ասացաք թէ կանոնաւոր կրթութիւնն
կարօտի Աղգային դպրոցի : Վանդե-
դպրոց, և այն աղգայինն է միայն,
որ ուսուցանէ որդւոց քոց ուստե-

րաց և դստերաց միանդամայն՝ զբարս,
 զբնաւորութիւն և զսեպհական յաս-
 կութիւնս Աղգիդ : Ոչ ոք կարէ սի-
 րել զայն՝ զոր ոչ ետես երբէք և
 ոչ լուաւ . ազգային դպրոցն է՝ որ ու-
 սուցանէ որդւոց քոց զվճիտ պատ-
 մութիւն Աղգիդ . և վառէ զնոսա ՚ի
 սէր Հայրենեաց իւրեանց : Աղգու-
 թիւնն կերպասի պատմուձան , կամ
 անկուածոյ քօղո չէ՝ զոր երբ կամի
 ազնուուհիդ ագանի , և երբ կամի
 մերկանայ . այլ ընդ արեան և ընդ
 կենաց նորա ունի զանբաժան հաղոր-
 դութիւն . և որ չուսանիցի սիրել զազգ
 իւր , նախատինս ածէ ՚ի վերայ ան-
 ձին իւրում , և անարգութիւն ՚ի վե-
 րայ բազմավաստակ և բազմերախտ ծլ-
 նողաց իւրոց : Աղգային դպրոցն է
 միայն , որ ուսուցանէ նմա զուղլա-
 փառ դաւանութիւն Եկեղեցւոյ Հայ-
 րենեաց . և ով այն Հայ ՚ի ներքոյ
 արեգական , որ զղաւոկունս իւր օձ-

տեալ և քեցեալ յազգային դպրոցաց՝
և յայլազգականս սպրոդեալ՝ ակնու-
նիցի զնոսա սերտ յազգութեան մէջ
պահել, հայրենասէր յօրինել, և Ե-
կեղեցւոյ սրբոյ հնազանդեցուցանել։
Աւաղօտարասէր բնաւորութեանս մե-
րոյ, և հազար աւաղ։

Օրինակի վասն,—դու դստեր քում
բարի համարիս ուսանիլ 'ի դպրոց
Անգղիացի, նա՝ 'ի Գաղղիացին, միւս՝
յիտալական, սա՝ 'ի Պարսկականն,
նա՝ 'ի Ծառըքաստանին, և միւս
մին՝ 'ի Ուուսին։ Արդ՝ դիցուք թէ
ես (այնքան խելագարեալ ոք իցեմ՝
որ առ 'ի փառս ընդունայնութեան
իմոյ,) հանդէս կազմեալ 'ի տան ի-
մում, հրաւիրիցեմ՝ զդոսա յընկերակ-
ցութիւն։ —Գիտես, ընթերցող. զի
ես Հայ եմ, և կարգաց աշխարհի և
Ազգի իմում ոգւով չափ նախան-
ձախնդիր։ բայց եկ օն, ցոյց ինձ,
թէ ո՞ր սէր, ո՞ր հաճութիւն, և ո՞ր

զուարձութիւնքն են , զորս վոխարիւ
 նիցեն ինձ այս պատուական աղնու-
 ռւհիք 'ի պէսպէս ուսմունս իւրեանց :
 Պաստխարակեալն Անգղիական կրթու-
 թեամբք զԱնգղիացին չափազանցէ 'ի
 գովեստ , և փօխանակ Հայկոյ և Ա-
 րամայ՝ զԱլբիոն և զԱ Էլէնկտոն քա-
 րողէ . անուամնք , որք ոչ երբեք լուան
 'ի Հայս : Գաղղիացին , այսինքն
 Հայն ուսեալ 'ի մէջ Գաղղիացւոց՝
 կապկօրէն ոստոստալով յամենայն 'ի
 սնուիս խառնէ զարմացումն և զծի-
 ծաղ : Խտալականն՝ ասպաստան 'ի քաղ-
 ցրուի բարբառոյն՝ գրեթէ ճպոօրէն
 միջէ զգիշելն բովանդակ : Պարսկականն՝
 զերես քօղէ 'ի ծածկոյթ , և մեկու-
 սի նստեալ զամենեսեան տեսանէ՝
 անտես կացեալ յամենեցունց , Ուուր-
 քաստանին՝ ծանր և լուրջ նստի՝ որ-
 պէս թէ զկնիք դատապարտութեանկ
 կարդայցէ ոք յունին նորա : Խոկ
 Ուուստականն՝ զամոյր 'ի վերայ սա-

մուրի զանձամբ արկեալ՝ (յաւէտ
ըէշի մշկոյ քան բամբիշ, խրտութլակ
կնոջ՝ քան Տիկին քաղաքավարի,)
միշտ զաչս կասկածողութեան այսր
անդր յածեցուցանէ : Առքա ամենե-
քին Հայոց գոտերք են, բայց իւրա-
քանչիւր ոք 'ի նոցանէ Զատագով
ուսման և բարոյից աշխարհին և ազգին՝
յորում ուսանն՝ հազիւ հազ գիտեն
թէ Հայք իցեն, և որ ինչ սմա հա-
ճոյական, միշտ նմա զզուելիք են, Արդ
առ քեզ ամբաստան գամ Հայկազուն
ծնող . ասա ինձ, ո՞ր է զուարձու-
թիւն է՝ զոր ես քաղել կարեմ յայս-
պիսի ազգային ընկերակցութենէ քա-
ղաքավարեալ և քաջուսեալ տիկ-
նացս :

Ասիցես—“Օ ինչ ապա, ուրեմն
արդիք մեր յայդպիսի լուսաւորեալ
ազգաց գպրութենէ և յընկերակցու-
թենէ 'ի բաց զրկիցեմք :

Պատասխանեմք ոչ:—**ԱՅԼ** փոխա-

նակ զորդիս ձեր 'ի դպրոցս նոցա առաքելոյ առ 'ի կորուստ աղգութեան և կրօնի իւրեանց , ածէք ուսուցիչս լեզուաց նոցա 'ի դպրոցս ձեր , և այնպէս կըթեցէք զուստերս և զդլստերս ձեր՝ յուսումն լեզուաց , ծիսից և սովորութեանցն , առանց զրունդիւրեանցն մոռացուցանելոյ :

Ասացաք և Հրապարակական : Քանզի որդիք քո 'ի տան ուսանելով՝ միայն զանձինս իւրեանց տեսանեն և զվարժապետի իւրեանց . որ շատ անդամզանց առնէ , կամ ակն ածէ 'ի ծնողաց խրատել . յանդիմանել և սաստել , զնոսառորպէս և հարկն է : Ուստի և ընական խեռութիւն նոցա գնալով գնայ և զարգանայ լնդ հասակացն յանտառելի ցաւ և յոգիմաշութիւն ծնողաց իւրեանց : Խսկ 'ի Հրապարակական դպրոցի , եթէ իցէ վարժապետուհին կատարեալ 'ի կոչման իւրում , օրիկաւ յառաջադէմ և ուսումնասէք

պատահուհեաց խրախուսեալ՝ ՚ի նա-
 խանձ շնորհացն նահատակին, և ՚ի
 վատթարաց և յուլից և ծուլիցն խոր-
 շորով՝ միշտ յազնիւն նկրտին կոյս :
 ՚Օ ուր և տարապարտ է կարծիքն՝
 զորս ոմանք ունին + իրը թէ որդիք
 իւրեանց առաւել վատ օրինակօք ՚է
 դպրոցին վատթարին՝ քան թէ լաւա-
 գունիւքն ազնուանալ կտրիցեն + ՚Օ ի-
 թէ նախ յառաջուստ չիցէ ապակա-
 նեալ բնուեն զնոսա, թէ ծնողք չիցեն
 ցուցեալ նմա զլատ օրինակ անձանց,
 և թէ անառակ ոք յազգականաց և
 ընտանեաց չիցէ սերմանեալ ՚ի մա-
 տաղ միտս նորա զուսմունս մոլորու-
 թեանց՝ հաւանելի չեք ամենեին՝ թէ
 ՚ի հրապարական դպրոցի, ուր չարն
 միշտ պատժի, և բարիքն միշտ պլ-
 ստակին՝ յանդիման աչաց իւրոց, ապա-
 կանեցին վարք նորա կամ բարք +
 ՚Ասե՝ եթէ վարժապետ կամ վարժա-
 պետուհին չիցէ նուաճետլ ՚ի հա-

Ճոյս ճոխաց . և չիցէ վարձուն՝ որ
պէս ողորմութեան՝ ակնկալ, այլ ան-
կախ և ազատաբար վարեցէ ըստ կա-
նովնի զիշխանութիւն իւր 'ի պատ-
ժել զիսեռ և զստահակս , և 'ի պսա-
կել զհեզն և զուսումնասէր , անկա-
րելի է՝ եթէ բարեգոյն վախճանի չժա-
մանեացի որդի քո :

Հարկաւոր է մանաւանդ դաստի-
արակութիւն (Օրիորդաց մերում , ըստ
որում Հայ . առ այն՝ զի 'ի Հնաց սկլոզ-
քանց յաւիտենից վաճառական գո-
լով Ազգիս՝ թէ 'ի խաղաղութեան, և
թէ 'ի խռովութեան աշխարհիս մե-
րոյ՝ պարտաւորին վաճառականութիւ-
յածիլ յաշխարհ ամենայն : Լիցին
տրամադրութիւն այսը գործառնու-
թեան յորում աստիճանի և կամք
իցեն լնթերցողին երեակայել , տա-
կաւին հեռացեալքն անյագ ցանկու-
թեամբ փափագին տեղեկութեան առ-
տնին հանգամանաց լնտանեացն , և

ընտանիք նովին չափով կարօտին տեղեկութեան անձին և հանգամանաց վիճակի և գործառնութեան հեռաւոր ընտանւոյ իւրեանց : Եւ ահա ծնանի աստուստ հարկ զնամնակագրութեան գիտութիւն . և այն հարկ մեծապէս 'ի վերայ հակէ ընդհանուր Ազգի մերում յերկոսին սերսն ևս :

Վաճառականին գործ այնքան խորՀրդոց և շրջահայեցութեանց կարօտին որքան և թագաւորին . և ընտանիք նորա են խորհրդապահ և ներքին ծերակոյտ իւր : Արդ՝ եթէ նոքագիտութիւն չունիցին որով 'ի ծածուկ հազորդել կարիցեն իրերաց ըզ խորհուրդս , զվեճակ , և զհանգամանս անցից տան , քաղաքին և աշխարհին՝ յորում և բնակինն , տես թէ քանի անկարգութիւնք և զեանք յառաջ գայցեն :

Օրինակի աղագաւ բերից աստանօր զմի կամ զերկուս 'ի ճշմար-

տապատում անցից , որք անցին 'ի
 Պուղա ժամանակաւ ինչ յառաջ :
 Այս մի թողեալ զկին իւր առ մօր
 իւրում , գայ 'ի Հնդիկս շահել զար-
 ուեստ իւր . և զկինի ժամանակաց ըն-
 դունի ուրոյն ուրոյն զգիր մօր և կնոջ
 իւրոյ՝ զի մի զմիւսոյն գանգատէր :
 Պանդխտացեալն մոռանալով զամե-
 նոյն հոգս աջ և ահեակ պատահա-
 րոց օտարութեանն՝ ջանադիր լինիու-
 րոյն պատասխանել և զերկոսին ևս
 'ի խաղաղուի համոզել : Տարաբաղտա-
 պէս և ոչ մին 'ի նոցանէ զիր գիտե-
 լով տանին զթղթեանն առ ոմն գրագէտ
 էրէց թաղի իւրեանց , զի ընթերցցի :
 Որ ընթեռնու և հաղորդէ զիմաստ նոցա-
 երկոցուն ևս : Ահա տես զիարդ ՚ի յայտ
 եկին ծածուկ խորհուրդք երկաքան-
 չիւրոցն : Հայնժամ սկեսուրն առա-
 ւել ևս զայրանայ հարսին իւրում , և
 հարսնն առաւել ևս ստահակի սկսեր
 իւրում . որ նստեալ յայնքան հե-

ռաւորս Հասուցին զերերաց գանգատ
Յորմէ ծադի հանապազորդեան խռո-
վութիւն և գժտութիւն տանն :

Բայց դեռ այս ամենայն սկիզբն
է երկանց. քանզի՝ և գրագէտն այն կամ
սրբակրօն քահանայն՝ որ լնթերցաւ ըդ
թղթեանն, ելեալ՝ ի Հրապարակ կամ
'ի փողոց քաղաքին, որում և պատա-
հին՝ պատմէ “զիտիցէք ասէ . զի՞ն չ
այս նիշ Հարսն և սկեսուր գրեալ իցեն
առ—” Եւահաելանէ քրթմնջիւն բե-
րանոց՝ ի բերանս ժողովրդոց, և ա-
ռաւել քան զառաւելն արծարծեալ
կրակին՝ արծակէ զայն Հրդեհ ամենա-
ծախ, որ զտուն և տիրուհիս միան-
գամայն առշորէ : Ահա քեզ առաջին
աստիճան տղիտութեան կանանեոյ
Ազգիս :

Դարձեալ եթէ ոք Հարուստ լն-
տանի ունիցի յօտարութեան, և կա-
միցի փոխանակագիր առնել, առեալ
նախ լնծայ վայելուչ և եղեալ՝ ի

վերայ նաև զուդ արծաթի դահեկանս՝
գնայ , կամ կոչէ առ ինքն զգրագէտ
ոմն կամ զգրող քահանայ : Արեկա-
նայ նմա զամենայն դժաճուկս առ-
անին խորհրդոց իւրոց , հրապարակա-
քարող առնէ զաղբիւր և զորքանու-
թիւն ապրստին՝ զոր և քարշէն ՚ի հե-
ռուստ , և յայնժամ գրել տայ զգիրն՝
հազար և մի թոնթորանօք . և յայսմբաց
՚ի յընծայիցն՝ հատանէ գրողին իրբև
զրողչէ՝ զհինգ առ հարիւր գումարոյն :

Խոկ թէ փոխանակագիր իւր առ
ժամայն վաճառելի լիցի , աղաչէ և
սպազատէ զգրագիր զքահանայն վա-
ճառել զայն զուդ գրամոյ : Խոկ նա
եթէ յանձն առնուցու առնել զայս
բաց ՚ի վերոյ գրեալ հնդէն առ հա-
րիւրն , յաւելու ապա և տասանո-
րդել , այսինքն հատանել վասն իւր
զմին ՚ի տասանց գումարոյն : Ահա
գնաց հարիւրին տասն և հինգ առ
՚ի զոհ տգիտութեան փոխանակագիր

գրել տուողին։ Եւ երանի թէ այս մի-
այն լինէր և ոչ աւելի։ Բայց կան
նաև խղճմանաց Տէր գրադիրք և
սրբակրօն հովիւք, որք վաճառեալ
զփոխանակագիրն, և զամբողջ գու-
մարն ստացեալ՝ տան մասն ինչ գրել
տուողին, և զմնացեալն յօդուտ ան-
ձանց վարին։ ասելով թէ “Թռուրքն
բովանդակօրէն ոչ վճարեաց դեռ, կամ
թէ զոր ինչ խնդրես արի տար, և վասն
գրամոց մի այդքան զզուեցուցաներ
զիս,” Եւ այսպէս որ Հարիւրոյ ար-
ժէիւք փոխանակագիր գրեաց, դուն
ուրեք տեսանէ զերեսուն և քառա-
սուն ’ի նոցանէ։ մնացեալն հող ու
մոխիր գառնայ բովանդակ առ ’ի Հա-
ճոյս գրողին միայն, Ահա քեզ երկ-
րորդ աստիճան տգիտութեան կանան-
ւոյ Ազգիս :

Եթէ զայսպիսի անցսն ’ի շար առ-
նուցումք փաստի, կարծեմք քանի որ
կամք աշխատիլ պարտիմք — բայց հարկ

է միանգամ գեթ հայել և 'ի միւս
գեմս վախճանի և հետեանաց տգի-
տութեանս այսորիկ, ՚ի Բարսյականն ա-
սել կամիմք, և ով 'ի կենցաղագետ
և յաշխարհավար ծնողաց ոչ իսկոյն
համաձայնեւոցի լնդ մեղ, թէ այս ոճ
գրչութեան կամ լաւ ևս գրողութեան,
բաց յարտաքին վնասուց և 'ի կե-
ղեքանացն՝ և 'ի ներբին համբաւ
անդր տարածիցէ զխոհերս տպակա-
նութեանն, և վնաս հոգեռը պատ-
ճառիցէ երկաքանչիւրոցն ևս, թէ
գրողին, և թէ գրել տուողին :

Բացաբերան աղաղակեմք ամենե-
քեան թէ մեր ազգն իրար մատնիչ
է, և ոչ երբէք խորհիմք կամ 'ի միտ
առնումք թէ ուստի ոյն մատնու-
թիւնն յառաջ գայ + որպէս զի կա-
բասցուք զաղբիւր առ ականն ցամա-
քեցուցանել : Ամառնութիւն Աղջիս
ահաւասիկ տեսանի, զի յառաջ գայ
'ի տգիտութենէ մեծագոյն մասին նո-

բա . մեծ մասն Ազգիս , մանաւանդ
 թէ և կանանին զուրկ են գլխովին
 'ի գրոց գիտութենէ . ուստի և պար-
 տաւորին , որպէս և ցուցաք , յայտ-
 նել օտարաց զծածուկս խորհրդոց
 խրեանց : Յանկութիւն մարդոյ յա-
 գումն չունի , և յորժամ միանդամ
 տիրանայ խորհրդոց ընկերի խրում ,
 յանայ տղրկօրէն քամել զարիւն նո-
 րա ցսպառումն չնչոյ : Օ որ ինչ կա-
 մի , սլահանջէ , այս և զսպատկառե-
 լին անգամ : Ոչ տաս՝ երթայ մատ-
 նէ զքեզ օտարին , և լինի վերջինն
 չար քան զառաջինն . ժողովեցարուք
 ուրեմն՝ զուն գործեցէք բառնալ զսկզբ-
 նապատճառ մատնութեան՝ զտգիտու-
 թիւն . և ահա տեսանիցէք զազդ ձեր
 առաւելագոյն սիրով շազկապեալ ընդ-
 երեարա՝ քան ընդ օտարոտիս և այ-
 լակդենս :

Չիք անդէորդ կամ պարտիզպան
 'ի Պողա , որ ոչ գիտիցէ թէ քա-

Նի՞ տունք են՝ որք ձգեն զապրուտու
իւրեանց 'ի Հնդկաց : Եւ ոչ այս-
չափ միայն, այլ թուել կարէ նա ե-
թէ կամիցիս և զամենայն միահաղոյն
և ասել թէ տարեկան ոյսքան մուտք՝
են Պուղայ 'ի Հնդկաց անտի, Եւ
այս ընդ այնպիսի իշխանութեամբ,
ուրանօր ով շոյտ զարթնուցու յառա-
ւոտուց՝ Համարի զինքն իշխան և թա-
գաւոր, և զկամքն՝ իւր օրէնք .
կարի յոյժ վտանգաւոր է, և բազ-
միցս զազկն ողջոյն վտանգեաց . որ
հազիւ երբէք պատահէր, եթէ իւ-
րաքանչիւր տան Տիկիայք ուսեալ
էին, և զգործ և զգրութիւն ան-
ձամբ անձին կատարէին :

Աւելորդ Համարիմ երկրորդել աս-
տանօր թէ Հարկ է գաստիարակու-
թեան (Օրիորդաց մերոց՝ ըստ որում
Հայ՝ առեալ և՝ յառաջնութենէ Ազ-
գիս մերոյ յընկերութիւն քաղաքա-
վարի կենաց, որպէս և 'ի պէսպէս

Հնորհացն Աստուծոյ սեպհականելոց
 աշխարհի մերում առ ՚Եղաւն ՚Եա-
 հապիտաւ և առ որդւովք և թոռամբք
 ՚նորա՝ յլնթացս չորեքհարիւր յիսուն
 ամաց, զորս եկաց ՚Եց ՚ի Հայաս-
 տան յետ ջըհեղեղին : Ինչ երա-
 նութիւն էր մեզ, եթէ ամենայն մեր
 ծնողանի, գիտէին և դաստիարակէ-
 ին զմեզ յայսոսիկ գերաշնորհ արտու-
 նութիւնս Ազգիս Հայոց : Եթէ մեր
 պատուոյն մեք անծանօթ մնայցեմք,
 զինչ մեղադրութիւն ապա և այլոց
 Ազգաց. բայց ոչ այդպէս, ժամանակն
 առ դուրս եկեալ Հասեալ կայ, յո-
 րում (Օրիորդք մեր ուսեալք այ-
 սուհետեւ մայրացին որդւոց՝ ոչ մի-
 այն ծննդեամբ, այլև սննդեամբ .
 ընդ կաթին արքու ցանելով ՚նոցա և
 զԱստուածատուր պատիւ Հայաստա-
 նի և Ազգիս մերոյ՝ սկզբան և ՚նա-
 խահօր ազգաց աշխարհի :

Պատմի Զ,

Յանձնական Դիտարիաբանութեան Օւիաբանաց ըստ ոքում
շաբաթ ընէլքականութեան :

Վ ԱՅՐԱԳԱՍՈՒՆ ԽԺՈՒԹԻՒՆ ազգաց,
որ ո՞չ ինչ առաւել ճանաչէր քան
զգազանային ոյժ մարմնոյ, և ար-
ուեստ հանճարաւոր՝ զիւր որսորդու-
թիւն, միշտ քամահեալ լնող ակամք
հայեցաւ 'ի կին մարդ՝ իբրև 'ի տկար
և անպիտան անդ ամ լնտանեաց իւ-
րոց : Եւ ասաւուստ է, զի յանյին
շատակ դարուց հետէ կանայք իբրև
ստրուկս և աղախնեայս համարեալ՝
մերժեցան յամենայն կենցաղայլար ա-
ռանձնաշորհութեանց և ուսումնա-
կան հրահանգաց : Բայց իբրև սկսան
մարդիկ առաւել քան զառաւելն քա-
ղաքավարել, և տղդ լնող ազգի կա-
լաւ զերթեեկ, սակաւ առ սակաւ
ծաղկեցաւ 'ի նոսա գիտութիւն, և
կանայք մեծագործք և հանճարեղք
լնող դարս դարս՝ առնացի ոգւով և

խորհրդով ծանուցեալ՝ հորդեցին շաւիլ ընդարձակ համօրէն սերին յընկերութիւն և 'ի հաւասարութիւն արուացն :

Եսև անդագար պատերազմունք առաջին գարուց՝ նուազութիւն արարեալ 'ի համար արուաց, բազմացոյց զհօրան իգաց. որով բազմակնութեան սկիզբն արարեալ 'ի մարդկային ընկերութիւն՝ ցածոյց յոյժ զյարդ գողտրական սերին, և զերամերամս 'ի նոցանէ խռնեալ 'ի մի կանանց, ցռական նախանձու և կասկածանաց արուացն արար պատարագ. և վասկեսց մեկուսացոյց զնոսա յամենայն ընկերակցութենէ, որպիսիք այժմ տեսանին յ(Օ)մանիա 'ի Պարակաստան, և յայլուր : Ո՞նդ այս պիսի ազգաւ անկեալ և վիճակի գերութեան մերոյ 'ի հինգ հարիւր ամաց հետէ՝ պարտաւորեցաք և մեք նոցա պէս, ոչ եթէ զմերսն երամել

՚ի մի գրոհ ստրկութեան , այլ՝ ընդորմավք և վարագութօք պահել զնուածա , զրկելով յամենայն կինցաղօգուտ և 'ի պիտանի գիտութեանց անտի , որով երբեմն ծաղկեալ **Տիկնաց Հայոց աշխարհիս՝ պաղաբերեցին մեզ զՃշմարիտ պարծանս :**

Տեսեր Ռնթերցող , զի զրկումն Օրիորդաց մերոց 'ի պիտանի Հրահանդաց և կը թութեանց անտի՝ ոչ է Ազգիս ընդարձոյս . այլ թէ գերութեանն մահաբեր հետեւանաց են անիծապարտ փուշքն և տատասկիք : Գերութիւն վաղ անց , ընդէր ասլաշըմայք ստրկութեան ոչ խորտակիցին : **Տգիտութեամբ անկաք** , գիտութեամբ գուն գործեսցաւք կանգնել վերստին :

Կախախնամ Արարչութիւնն կազմաց զնոսա յընկերութիւն , այս և 'ի զարդ իսկ ընկերութեան մերց , և մեք՝ եթէ լստ վայրենաբարոյ խժու-

թեան ազգաց 'ի բաց մլրժիցեմք զնու-
 սա , յանցաւոր գտանիմք աստուա-
 ծեղէն գերաբուն խմաստութեանն , որ
 արար զմարդն : | ոկ անունդ ՄԱՐ-
 ԱԹՈՂ առնէ զամնայն մարդ , իբրև
 կիսարարած և պակասաւոր . զի ծայրն
 մարդկութեան՝ որ եղ անուանս ամե-
 նայն իրաց՝ չեղիտ որ ընդ իւր ՚ի մի-
 ասին լինէր || ՚ի արդ՝ այսինքն մի ա-
 հա , կամ միանման . զի արդ՝ զահա և
 զնմանն ցուցանէ , մինչ ոչ ետես զկին
 իւր , զկեանս իւր , և նովաւ հանդերձ
 եղեւ մի արդ կամ մարդ : || Եւ եղի-
 ցին երկոքին 'ի մարմին մի . ||

Բնութիւնն հոգածու մայրութեամբ
 խնամ կալաւ յեղուլ 'ի ՚նոսա զա-
 մենայն որինչ նազելի՝ գողտը և վայ-
 ելչական . որպէս զի լինիցին ՚նոքա-
 մեզ 'ի կանայս , այսինքն կեանս՝
 օգնութիւն և մխիթարութիւն յամե-
 նայն 'ի կեանս մեր . և մեք զլանայ-
 ցեմք ՚նոցա վասն մեր զկրթութիւն ,

որ յաւետ տաշեալ և տապարեալ ըզ
խորդութիւն բնութեանցն՝ յօրինիցէ
զնոսա ատենահառ օգնականս յամե-
նայն 'ի կարիս մեր : —

“Ե՞ն ինչ ալիտին ուսմունք դստե-
րաց մերոց, որ ոչ կոյս դառնալոց են,
ոչ ապաշխարող .” ասեն ոմանք :

Պատասխանեմք, խաբիք **Պ**արոնայք,
կուսից և ապաշխարողաց չպիտին այն-
քան հրահանգ և կրթութիւնք 'ի պահ-
պանել զջոր ու ցամաք դլուխս իւրեանց՝
որքան դստերաց ձերոց, որք յար-
բունս հասակացն՝ և արդէն իսկ պար-
պարտաւորին ոչ եթէ անձանց մի-
այն, այլ ձեզ ծնողացդ սպաս հար-
կանել և հաճոյանալ. մեծամեծ եղ-
բարց իւրեանց քուրանալ ամենայն հը-
նազանդութեամբ և ընտանեկան սի-
րով, փոքրիկ եղբարց կամ քերց՝ 'ի
կուսութեան մայրանալ, ձերոց պատ-
կառ կալ, և պառաւանցն՝ պարկեշտ,
դրացեաց զսէր շահել, հիւրոց պատիւ

դնել . առ անծանօթս Համեստօրէն
 կալ , և ծանօթից ընդելանալ . օր ա-
 ռուր զհողս տան տնտեսել . ամենայն
 ակնարկութեան մօր կամ հօր դանձն
 պատրաստական ընծայել . վասն հոգ-
 ւոյ իւրոյ և ծնողացն՝ աղօթիւք առ
 Աստուած դիմել , և որ Հազար այս-
 պիսի տնական Հարկիք իցեն՝ անթե-
 րի լնուլ : Եւ որոց այսքանեաց կամ
 այսպիսեաց պէտս ունի կոյս կամ ա-
 պաշխարողն : Ապա ուրեմն 'ի բաց
 յանձանց թօթափիցէք զնոտի զայդ
 կարծիս , և զոր միեչ ցարդ կոյր ըգ-
 կուրայն , ջանացարուք այսուհետեւ օ-
 րինաւոր հրահանգօք ուսուցանել նո-
 ցա զբարեգոյն եղանակ տնտեսական
 և ընկերուկան կենաց : Արդարեւ յայր-
 բենարանի կամ 'ի Քերականութեան
 չիք կանոնին որ ուսուցանիցէ դսուել
 քում զիարդ կարել զպատմուճան
 եզրօր իւրոյ , կամ անկանել գուլ-
 պայս հօր , սակայն և այնպէս՝ կա-

նովելն՝ դորս նոքին աւանդեն, այնա
 պիսի իմն նրբութիւն և լոյս տան
 մտաց նոցա, մինչ զտարեոր արտա-
 քին ուսանելիս, լմբանել բոլորովիմք
 յլնթացս երից ամսոց + թռուաբա-
 նութիւնն գանկ և գահեկան չէ, բայց
 քաջ պահէ զհամար երկոցուն ևո +
 Արուեստք միմեանց են առաջնորդք,
 այլ գրագիտութիւն՝ ամենայնի: Եւ
 զինչ այժմ ծնօղ, տակաւին կուսից
 և ապաշխարողաց համարիցիս պիտա-
 նի զգիտութիւն այսոցիկ պարտեաց
 և պաշտամանց, և դստեր քում. ոչ:
 “Խրաւ է, ասեն, բայց եթէ աղ-
 ջեկ կարդացող լինեի փոյթ տյրիանայ;”
 Կարի իմաստուն առած . ուրեմն
 յլնդհանուր Եւրոպէ կենտ մին ա-
 րու ևս չպարտի գտանիլ. լստ որում
 հազեւ ուրեք գտանի անդ ՚ի մէջ
 լուսաւորեալ ազգացն՝ կին որ չպե-
 տիցէ զկարդալ և զգրել:
 “Աղջկանց հարկ չէ, ասեն, դաս-

տիտարակութիւն, զի սիրահարացն դը-
րեանս գրեն :

Փրանկլին մեծն Ամերիկացի՝ ասաց
երբեմն. “Եթէ մարդիկ այսքան չարք
իցեն հաւատով, զինը լինեին ապա
առանց հաւատոց :” Իւ մեք ասեմք,
եթէ Օրեորդք ուսմամք և Հրահան-
գօք արտաքոյ կարգի վարեսցին, զոր-
պիսի կեանս վարէին ապա՝ առանց
ուսման և կըթութեան : Բայց յա-
էտ հաւանեալս եմք, թէ՝

Պարծանք Հայուհեաց
Հիմնի յաւէտ յայս,
Չառնել ինչ ընդդէմ
Պատուոյ և Փառաց :

Ո՞ երբէք մղեաց
Պատերազմի Հայս,
Առ պաշտպանութիւն
Սրբութեան կանանց .

ՊԱՆԻ Եւ

Յաղագու Դաստիարակութեան Օւեռդաշ ըստ ոքում
Նոր Բան Հիւ :

ՎԵՐԴԱԲԱՆ

ՅՈՒՑԱՔ յառաջին գլու խան՝ թէ որպէս սկզբնաւորութիւն նախկին դրապէրոցաց արուաց և իգաց միանգամայն՝ թացեալ 'ի Հայաստան, սփռեցաւ լնդորդոց և դստերաց նորա յաշխարհ ամենայն :

Յուցաք ես՝ թէ որպէս կանայք կերթդաստիարակեալք յաշխարհի մերում, ոչ միայն նախկին Հեղինակք հանդիսացան աստուածօրհներդ գրուածոց, այլ և սիւն և հաստատուի կացին Եղեղեցւոյ որբոյ մերում, լնդդէմ կատաղի կամաց կրակապաշտ թագաւորացն Պարսից :

Յուցցուք այսուհետեւ նաև զշարուանակութիւն ուսման յայսորիկ յերանելեաց անտի հետէ անլնդհատ ցաւուրս մեր, և զարդի արծարժումն

նորա ողոքմութեամբ Ամենակալին ընդ
ամենայն տեղիս , ուր կան ազգ մեր ,
թէ 'ի բնիկն մեր Հայաստան , և թէ
'ի գաղթականս նորա :

Ու էպէտե երկիր ոտնատակ եղե
Հայաստան յերեսաց ամեհի և վայ-
րագ բարբարոսաց , բայց որքան պա-
կասեցաւ նա յարտաքին փառաց և
'ի միսիթարութեանց աշխարհիս այ-
սորիկ , այնքան և առաւելաւ հաւա-
տովք 'ի փառս երկնաւորս : Որքան
առաւել քանդեցան աւանք և շենք
այնքան վանորայք և կուսանոցք բազ-
մացան , որոց հանապազորդեան մըր-
մունջք էին սաղմոսք 'ի բերանս նո-
ցա : Այս սրբազան և աստուածա-
գումար միաբանութիւնք էին Հայ-
ոց աշխարհիս՝ որ յանհուն սասա-
նութեանց և յարեան ծփանաց ան-
տի հանին և հասուցին առ . մեզ զաստ-
ուածախօս լեզու և զդուրութիւն աշ-
խարհիս մերոյ : Այս սրբազան եղ-

բայրութիւնք և քուրութիւնք էին ,
 որ անշէջ պահեցին զհուր ջերմեռան-
 դութեան բարեպաշտօն ազգին մերոյ
 առ հաւատ երկնաւոր Ա տրդապետին ;
Այս առաքելաշնորհ մենաստանք է-
 ին , որ իբրև աղբերակունք զովու-
 թեանց վտակեալք յանհուն ամայու-
 թեան անապատացեալ աշխարհիս՝ շե-
 ջուցին տստ և անդ զծարտւ մենա-
 ւոր ճանապարհորդաց . **Քրիստոնէ-**
 ից և **Քրիստոնէուհեաց** ասեմք ,
Հայոց աշխարհիս : **Ոչ** երբէք ու-
 րեք 'ի գլխաւոր վիճակս մեր դադա-
 րեցաւ կուսանոց , և որպէս ականա-
 տես և փորձաւու 'ի մանկութեան ,
 ոչ ումեք 'ի տղայոց կասեցոյց եր-
 բէք զկաթն թարմ աստուածային գի-
 տութեան : **Յիշեմ** — **յիշեմ** այք—
 բայց երանին թէ նովին անմեղու-
 թեամբ՝ որով և սկսայ — յորժամ յԱ-
 զուլիս , 'ի **Գաղթն** անուանեալ ա-
 ւանի մերում , աշակերտեալ դատ

տիարակութեան Աթոռամօք Հայաս-
տանեայց՝ վերստին աշակերտեցայ մայ-
րաբար հրահանգութեանն Ըողանայ
՚ի նուագս օրհներգութեան Աստու-
ծոյ իմոյ : Եւ եթէ ձմլել և մրզել
կարիցեմ զուշ ՚ի պղտորեալ զբա-
զանաց հեռաւոր օտարութեան, զբա-
զումս յառաջ բերել կարեմ ՚ի հոյ-
ակառ և յանուանի արանց աշխար-
հիս՝ որ նախ մարց և կուսանաց ա-
շակերտեալք՝ Հտսին ՚ի ծայրագոյն չափ
կատարելութե զիտութեան իւրեանց:
Երանին .—Հազար երանին աշխարհի
մերում, որ այսպիսի աստուածերամ
ուրբուհեօք է լի :

Ո՞ս ՚ի վախճան անցեալ դարսւ,
յորժամ դպրոցօք և տպարանօք փայ-
լէին Կալկաթա և Մադրաս քաղաքք
Հնդկաստանի, և հրահանգօք և կըր-
թութեամբք բարգաւաճէին պատա-
նիք և կուսանք Ազգիս, եթէ ոք
գնացեալ յ(Ս)սմանաստան քարոզէք

գհարկ դաստիարակութեան Օրիորդաց աշխարհին, եթէ չքարկոծէին՝ անշուշտ լնդ այր հերձուածող համարեալ զնա՝ 'ի բաց մերժէին : Խսկ արդ՝ թնդ՝ 'ի մեջն Պօլիս՝ ուր բարձր ՚ի գլուխ պայծառանայ ԱՌԵՍՐՈՎԱՓԵԱՆ մայր ուսումնարան սոսկ : Օրիորդաց Հանդերձ բազում այլ փոքրիկ և մեծամեծ դպրոցօք, որպէս և անհամար առանին դաստիարականոցօք . այլ և գրեթէ յամնայն քաղաքս ԱՌԵԾԻՆ և Փոքրուն Հայաստանեայց ուրանօր դըտանին տունք յիսուն՝ անդ դտանին ամենայն իրաւամբ և դպրոցք վասն դըտերաց Հայոց :

Ո՛վ երբէք հաւատայր, թէ Բէնդան՝ գիւղ փոքրիկ կառուցեալ 'ի խորին խորշ ինչ Տաւրիկայ լերին՝ առեղերը Երփրատայ, յառաջ լնծայիցէ աստանդական ճանապարհորդին զհրաշակերտ զիւր դպրոց յերկուս սրահաբաժանեալ, մի վասն ուստերաց, և մի՝

վասն գնտերաց աղդիու, սակայն և այն-
պէս տեսի ես անդ զդպրոցմն՝ զորս հան-
գանակութեամբ Հայկազնոց տեղւոյն
կառոյց մեծանուն Գէորգ Ամիրոյ .
և անդուլ աշխատէր վասն օր աւուր
յառաջադիմութեան և պայծառու-
թեան նորա :

Կարբի , Թէպէտե յառաջագոյն
աւան անուանի յԱյրարատեան նա-
հանգի Հայոց Մեծաց՝ առ ստորոտւուլ
լերին Երայի , սակայն 'ի Թահմազ
զուլի Եատը շահէ և այսը՝ բու յա-
ւերակին կայր : Խսկ արդ՝ կրկնայարկ
գպրոցօք պայծառանայ հրաշացեալ
հրահանդօք ուստերաց և դստերաց
աղդի մերոյ՝ որպէս և յայլ գաւառն :

Տես ընթերցնդ , զերկուս միայն 'ի
փոքրկանց և գրեթէ յաննշմարելեաց
ածի այսրէն յօրինակ . որով ոչ թէ
ասել կամիմ , թէ մին միոյն էր 'ի
Տաւրիկէ և միւս յԱյրարատեան գա-
ւառի , այլ այն թէ՝ ողորմութեամբ

Բարձրելոյն այժմ ճաղկեալ է աշխարհն
դպրոցօք ընդ ամենայն տեղիս . ոչ՝ ի
հրահանդս ուստերաց միայն , այլ և
դստերաց հայոց :

Օ ի արդէն Հռչակեալ ծանու-
ցեալ են գրեթէ ամենայն ուրեք համ-
բաւաւոր դպրոցք Այրարատայ . Աիւ-
նեաց , Ազուանից , Տփղեաց , Աշտար-
խանայ . Եոր Եախիջևանայ , Մոս-
կովայ , Պօլսոյ , Օ միւռնիոյ և այլոց
տեղեաց և աշխարհաց , զորոց թէ
մանրապատում լինել յօժարէաք՝ եր-
կարեալ ելանէաք ըստ չափ յառա-
ջադրեալ բանասութեանս :

Եւ զի ինձ զուշադրութիւն ընթեր-
ցողիդ առ հեռաւորս և յանձանօթս
յածեցուցանել . ոչ զայն և ամեներան
Եախահարք և Հիմնադիրք Մար-
դասիրական Շեմարանիս մերոյ խոր-
հեցան և հաստատեցին , և ընդ յո-
լով ամս շարունակ հրահանդեցին
՚ի նմա ոչ միայն զալատանիս , այլև

զօրիորդս մեր՝ յուսմունս մերազգի
և այլազգի դպրութեանց : Արարին
այն, — և վասս տամ անմահ յիշատա-
կաց նոցա , որով Հաստատի խոնարհ
այն գրութիւն իմ թէ՝ դաստիարա-
կութիւն (Օրիորդաց հարկ է , ըստ
որում նոր բան չիք . այլ 'ի սկզբա-
նէ յաւիտենից սկսեալ և առ մեզ
ենաս անընդհատ շարունակութեամբ :

Այժմ հերիք է , ընթերցող թէ
իմանաս յորմաստիճանի դառն կըու-
կծանաց բազմօրեայ հարուածոց իմոց
ընկողմանեալ՝ գրեցի զայս դուզեաքեայ
Հատուկտուր տնու անեալ ճառ՝ յոզորդ
և 'ի գութ շարժիս խկոյն . և եթէ
սէր սիրասնունդ զաւակացդ ոչ ստի-
պիցէ զքեզ , տակաւին զեջանելով
քո 'ի վափագ ցտւագար գրչիս ,
աստուածսիրաբար և ազգասիրաբար
խոնարհիս 'ի հայցուած պազատա-
նաց սրտի իմոյ . և ամենայն պարու-
նութեամբ քով ջանաս օր յառաջ

Հաստատել ինձ զգպրոց վասն դաստիարակութեան Օքփորդաց մերոց ,
որով որպէս Հաստատ Հաւատամ ,
շահիս տնձին և ազդի քում զանըս-
պառ երանութիւն յաստուածախօս
բերանեցին . որ ասաց , “թոյլտուք մանկ-
տւշդ գալ առիս և մի առանցուք ; ”



100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000

